Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2
«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.05.2024թ.

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Ռոման Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝
- Դավիթ Մկրտումյան
- Ալբերտ Դանիելյան
- Արսեն Աբգարյան
- Սեյրան Սարգսյան

Քարտուղար՝ Լիլիթ Գևորգյան

Նիստի օրակարգ.

1. Գնման ընթացակարգի հրավերու փոփոխություն կատարելու մասին:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված վերանայված գնման հայտը՝ **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերում փոփոխության կատարելու մասին, և առաջարկեց հրավերում կատարել փոփոխությունը (լրացումը):

Հանձնաժողովի անդամների կողմից որոշվեց.

1. **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություններ՝ անհրաժեշտությունից ելնելով:
2. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ և 40-րդ հոդվածների պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռ. Արշակյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Մկրտումյան

_____ Ա. Դանիելյան

_____ Ա. Աբգարյան

_____ Ս. Սարգսյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 10-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ և 40-րդ հոդվածների համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9 հանրային իշխանության մարմինների տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավման նպատակով կազմակերպված ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված լրամշակված գնման հայտը:

Փոփոխության նկարագրություն՝ Հրավերում ներառել, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ, մասնավորապես՝ «շարժիչ» բաժնից հանել «շղթայով» բառը, «արտադրության տարեթիվ» բաժնում «2024թ» փոխարինել «Պետք է համապատասխանի ձեռք բերման տարեթվին» արտահայտությամբ, «պարտադիր պայման» բաժնում ավելացնել «Մատակարարը պետք է ներկայացնի համապատասխան սերտիֆիկատ» և «Երաշխիքային և հետերաշխիքային ժամանակահատվածում վերանորոգման անհրաժեշտության դեպքում Մատակարարի կողմից վերանորոգումը իրականացվում է 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Մատակարարը Պատվիրատուի կողմից ընդունելի ավելի երկար ողջամիտ ժամկետի վերաբերյալ հիմնավորում չի ներկայացնում» արտահայտությունները և նույն բաժնում «մատակարարման վերջնաժամկետը՝ 2024թ. դեկտեմբերի 20» փոխարինել «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 18-րդ կետով նախատեսված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 90 օրացուցային օրվա ընթացքում»:

Փոփոխության հիմնավորում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանին:

Հեռախոս՝ 011-54-66-40

Էլ. փոստ՝ ***info@spm.am***:

Պատվիրատու՝ Պետական գույքի կառավարման կոմիտե